Հավելված
ՀՀ փոխվարչապետի
N 595 - Ա որոշման

ԾՐԱԳԻՐ
«ԽԵԼԱՑԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ «ԽԵԼԱՑԻ ԱՆԱՍՆԱՇԵՆՔԻ» ԿԱՌՈՒՑՈՒՄ»

1	Ծրագրի նպատակը	Ծրագրի հիմնական նպատակն է Հայաստանի ազգային ագրարային համալսարանի Սիսիանի մասնաճյուղի ք. Սիսիան, Ռ. Իսրայելյան փողոց 73/1 հասցեում գտնվող ուսումնափորձարարական կենտրոնում (այսուհետ՝ Կենտրոն) «խելացի անասնաշենք»-ի, տարածքի ցանկապատման, արտաքին ջրամատակարարման և կոյուղու կառուցման շինարարական աշխատանքների իրականացումը, որը՝ 1. Կնպաստի մարդկային կապիտալի զարգացմանը. • Համալսարանի ուսանողների համար գործնական հմտությունների զարգացմանը և աշխատունակության բարձրացմանը, կունենա ուսումնաարտադրական և գիտափորձարարական նշանակություն ուսանողության և տարածաշրջանի ֆերմերների համար անասնաբուծության/անասնաբուժության բնագավառներում, 2. Կնպաստի Սիսիանի տարածաշրջանի սոցիալ-տնտեսական զարգացմանը. • Անասնաբուծության/անասնաբուժության, կաթի և մսամթերքի արտադրության մասնագետների պատրաստումը կնպաստի Սյունիքի մարզի և մերձակա համայնքներում նոր ֆերմերային տնտեսությունների և ագրոբիզնեսների աճին, ինչպես նաև գործող տնտեսություններում կլուծվի մասնագետների կարիքի հարցը: • Կենտրոնի կրթական և պրակտիկ հմտությունների զարգացման ծրագրերը մատչելի կլինեն Սիսիանի տարածաշրջանի ազգաբնակչության և Արցախից տեղահանված ընտանիքների համար, և որպես գյուղատնտեսության վարման «խելացի» օրինակներ՝ կլինեն ուսանելի և ընդօրինակելի: Խելացի և նորարարական լուծումները հնարավորություն կընձեռեն տնտեսավարողներին արդյունավետ և նպատակային օգտագործել ռեսուրսները՝ ապահովելով շահավետ արդյունքներ, որը իր հերթին կխթանի անասնապահությամբ զբաղվել ցանկացողների աճը տարածաշրջանում՝ ընդլայնելով արտադրական ծավալները ծախսարդյունավետ եղանակով:
2	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով արտոնություններից:

3	Բարեգործը	Հայ Օգնության Ֆոնդ (Նյու Յորք, ԱՄՆ), ի դեմս Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի, քաղաք Երևան 0010, Մովսես Խորենացու փողոց 22, ՀՎՀՀ 02517115
4	Ծրագիրը կատարողը	«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամ (ՀԱԱՀ), Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Տերյան 74, ՀՎՀՀ՝ 01507028:
5	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետություն, Սյունիքի մարզ, ք. Սիսիան, Հայաստանի ազգային ագրարային համալսարանի Սիսիանի մասնաճյուղ, բնագավառը՝ կրթության:
6	Ծրագրի բյուջեն	35,430,526 դրամ
7	Բարեգործություն ստացողը	Սյունիքի մարզի ու մերձակա համայնքների անասնապահությամբ զբաղվող ֆերմերներ, սկսնակ և գործող անասնաբույժներ, Սիսիանում և հարակից տարածքներում բնակվող Արցախից տեղահանված բնակչություն:
8	Ծրագրի իրականացման տևողությունը	2022 թվականի օգոստոսի 20-ից մինչև 2022 թվականի նոյեմբերի 10-ը:
9	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Խելացի անասնաշենքի, կթման սրահի, կոյուղու, ջրամատակարարման, էլեկտրաֆիկացման, տարածքի ցանկապատման շինարարական աշխատանքների իրականացում՝ - 35,430,526 դրամ: Նախատեսվում է իրականացնել 2022 թվականի օգոստոսի 20-ից մինչև 2022 թվականի նոյեմբերի 10-ը:
10	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Խելացի գյուղատնտեսության զարգացման ուսումնական և վերապատրաստման կենտրոնի «խելացի անասնաշենքի» շինարարական աշխատանքների իրականացում - 35,430,526 դրամ:
11	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Չեն նախատեսվում:
12	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման	Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարան և Սիսիանի համայնքապետարան:

	մարմինների, այլ կազմակերպությունների հետ	
13	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված «Բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի» 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

29.08.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ